

**ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ «ՓԱՐԻՉ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ**

ԱՍՄԱՐՅԱՆ Հ. Ա.

Հայ պարբերական մամուլի ունեցած դերը Հայ մշակույթի պատմության բնագավառում հսկայական է: Հայոց պատմության, քաղաքականության, տնտեսական և մշակութային հարցերից զատ, Հայ պարբերական մամուլում անդրադարձել են նաև միևնույն պատմական ճակատագրով անցած Հարևան ժողովուրդների և, մասնավորապես, իտալացիների պատմության հիմնախնդիրներին: Այդտեղ տպագրված XIX դ. երկրորդ կեսի նյութերը աղբյուրագիտական սկզբնաղբյուրի արժեք ունեն:

Այս տեսակետից իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին նյութերը, որոնք որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում, առաջին անգամ են քննարկվում հոդվածում: Աբրահամ Մուրադյանի «Փարիզ» պարբերականում տպագրված նյութերում հետաքրքիր տեղեկություններ և նոր փաստեր կան, որոնք իրենց արտացոլումն անգամ չեն ստացել Իտալիայի պատմության վերաբերյալ պատմագիտական հիմնարար աշխատություններում ("История Италии" (т. 2, М., 1970), և "История XIX века" (пог. рег. профессором Лависса и Рамбо, т. 5, М., 1938):

Մի վ էր Աբրահամ Մուրադյան խմբագիրը և ինչ առաքելություն ուներ նրա հրատարակած «Փարիզ» պարբերականը Հայ լրագրության պատմության բնագավառում:

Ա. Մուրադյանը (1833-1903) Հայ հասարակական մտքի պատմության բնագավառում ազատական ուղղության գործիչ էր, հրապարակախոս-խմբագիր: «Փարիզը» Ա. Մուրադյանի կյանքում մեծ դեր է ունեցել, քանի որ այնտեղ ներկայացվել է «Ֆրանսիական կապիտալի հետ կապված Հայ առևտրականների դերը», և այդտեղ էլ նա մշակել է իր «Օրինական» ծրագիրը Հայ ժողովրդին լուսավորելու գործում:

«Փարիզ» լրագիրը հրատարակվում էր Ֆրանսիայի մայրաքաղաքում (1860-1863) այն տարիներին, երբ Իտալիայում ծավալվում էին ազատագրական շարժումները: XIX դ. 70-ական թթ. իտալացիների երազանքն իրականացավ. Հռոմը «հավիտենական քաղաքը», հռչակվեց Իտալիայի մայրաքաղաք, և ազգային պետության միավորումն ավարտվեց: «Փարիզ» լրագիրը հրատարակվեց մինչև 1863 թ.: Ա. Մուրադյանն իր պարբերականի էջերում հրատարակում էր Հայագիտական նյութեր, ինչպես, օրինակ, նշանավոր Հայագետ Կ. վարդ. Շահնաղարյանի «Դաշանց թղթի» վերաբերյալ ընդարձակ հոդվածաշարը՝ արժեքավորելով ու մեկնաբանելով այն Հայ հասարակական մտքի պատմության մեջ: Տպագրում էր նաև արկածախնդիր Լևոն Լուսինյանի «Հիշատակարանից» հատվածներ՝ ուղղված Վենետիկի Հանրապետությանը իրեն Հայոց թագավորի ժառանգորդ ճանաչելու վերաբերյալ:

Ա. Մուրադյանը ծնվել է 1833 թ. Արմաշում: Նրա հայրը՝ Մուրադյան վարժապետը, Հալեպից էր: Նրանք ընտանիքով տեղափոխվել են Կ. Պոլիս, այնտեղ կապեր հաստատել Հայ նշանավոր մտավորական Ստեփան Ոսկանյանի և այլ հասարակական նշանավոր գործիչների հետ: Ուշագրավ է, որ Ա. Մուրադյանի «Փարիզը» և Ս. Ոսկանյանի «Արևմուտք» պարբերականները հրատարակվում էին միևնույն ծանիկ Արամյանի տպարանում:

Ա. Մուրադյանը Պոլսից տեղափոխվում է Արմաշ, վաճառելիք հիմնում է դպրոց, որտեղ մանկավարժական աշխատանքով է զբաղվում 12 տարի շարունակ: Խմբագիրն իր մասնագիտական գործունեությունն սկսել է Նիկոմեդիայում. հրատարակել է «Հայրենասեր» փոքրիկ լրագիրը՝ քննարկելով առևտրի հետ կապված զանազան հարցեր, հետո տեղափոխվել է Փարիզ և ստանձնել համանուն պարբերականի խմբագրի պաշտոնը¹: Ինչպես նկատել է ակադեմիկոս Ա. Կարինյանը, շատ կարճ ժամանակամիջոցում «Փարիզը» աշակերտներ գտավ տարբեր տեղերում պարբերականի տարածման համար: Գրականագետը գրում է, որ «Փարիզը» հատուկ «գործակալներ» ունեւր թուրքիայի մի շարք կարևոր քաղաքներում (Կ. Պոլիս, Ադրիանուպոլիս, Ջմյուռնիա, Պրուսա, Նիկոմեդիա, Թեքիրտաղ, էրզրում, Վան և ապա Յաշ, Պուքրեշ, Վիեննա, Պետերբուրգ, Մոսկվա, Տիբիս, Թեոդոսիա, Թեհրան, Մանչեստր, Նյու Յորք, Կալկաթա և Բոմբեյ): Վաճառում «Փարիզի» գործակալն էր Խրիմյանի նման ժողովրդական դործիչը: Պետերբուրգում և Մոսկվայում «գործակալի» դերը համաձայնել էր ստանձնել Իզմիրյանը, Տիբիսում՝ Գաբրիել Միրզոյանը, Թեոդոսիայում՝ Պետրոս Հեքիմյանը²: Իսկ դա նշանակում էր, որ պարբերականի նյութերին իրագրել էին հայաշատ գաղութներում:

Կյանքի վերջին շրջանում Ա. Մուրադյանը խմբագրել է «Արմավենի» թերթը (Կահիրե, 1865), որի փակվելուց հետո վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել մանկավարժական գործունեությամբ ու շարունակել թղթակցել պոլսահայ մամուլին: Ֆրանսերենից թարգմանել է Միշլեի «Սերը»: Կազմել է երկու մասից բաղկացած այբբենարան³:

Ա. Մուրադյանն իր մահկանացուն կնքեց 70 տարեկանում:

«Փարիզի» խմբագիր Ա. Մուրադյանը, XIX դ. 60-ական թթ. տրպազրելով նյութեր իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին, իմաստավորում էր այդ շարժումները: Գտնվելով Եվրոպայի կենտրոնում՝ նա քաջատեղյակ էր ժամանակի եվրոպական մամուլին և իտալական ազատագրական շարժումներին տրվող դրական և բացասական գնահատականներին: Նա իր ընթերցողների ուշադրությունը սեռում էր այդ հիմնախնդրի վրա: Իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին տպագրված նյութերի մեծ մասը «Փարիզի» խմբագիրը քաղվածաբար վերցնում էր ֆրան-

¹ Կարինյան Ա., Ակնարկներ Հայ պարբերական մամուլի պատմության, Ե., 1960, հ. 2, էջ 478:

² Նույն տեղում, էջ 485:

³ Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատ. Գ, գիրք 1, ՄԵ-Ռ, Ե., 1990, էջ 88:

սիական մամուլից: Ա. Մուրադյանը չէր կարող այլ կերպ վարվել. ինչ-որ տեղ էլ խուսափում էր գրաքննությունից: Իսկ իտալական շարժումները ներկայացնելով՝ ազատ էր իր հայացքներում:

Լրագրում տպագրվում էին նաև հեղինակային նյութեր: Դրանցում Ա. Մուրադյանը միանշանակ դրական վերաբերմունք ուներ այդ շարժումների վերաբերյալ: Գովեստները դարձրելով իտալականների հասցեին այնքան շռայլ էին, որ Ա. Մուրադյանը կարծես թե ստանձնել էր նրանց քրեական գործի դերը:

Պարբերականում իտալական շարժումները հիմնականում ներկայացվում էին վառ անհատականություններ Ջուզեպպե Գարիբալդիի, Զուզեպպե Մաձձինիի, Կոմս Կավուրի և Իտալիայի թագավոր Վիկտոր-Էմանուել Երկրորդի կարգախոսներով:

«Փարիզի» 1860 թ. համարներից մեկում պարբերականը գրում է, որ «Իտալիոյ մէջ գործքերը մեծաքայլ կառաջանան»⁴: Իսկ մի այլ համարում ուրախությամբ նշում, որ «Արդէն Իտալիա, առանց մեծ ընդդիմութեան միացաւ եւ անկախ ու հզօր տէրութիւն մը կազմեցաւ»⁵: Այս դեպքում դատապարտում է Ավստրիայի դիրքորոշումը Իտալիայի նկատմամբ, որն արգելակում էր այդ գործին: Սակայն պարբերականը ինչ-որ տեղ զգուշորեն արդարացնում է Ֆրանսիայի գերիշխող դիրքը Իտալիայի միավորման գործում. թեև Ֆրանսիան արդեն ճանաչել է իտալական թագավորությունը, լրագիրը, այնուամենայնիվ, հիշատակում է. «գաղղիական գունդերը պիտի շարունակեն մնալ ի Հռովմ, մինչեւ որ զանոնք հոն տանող հանգամանքներն ապահովուին»⁶:

«Փարիզ» պարբերականը 1860 թ. համարներից մեկում (34) ներկայացնում է Զ. Գարիբալդի գորավարի բարեմասնությունները. որքան էլ Վիկտոր-Էմանուել թագավորը «մեծ զօրապետին» խոստացել է պատիվներ տալ, վերջինս հրաժարվել է ամեն ինչից և մեկնել իր սիրած հանգստավայրը Կապրերա կղզի: «Փարիզն» իր ընթերցողներին ծանոթացնում է Կապրերայի աշխարհագրական պայմաններին, դիրքին, բնակիչների թվին: «Այս կղզի Գորսիքայի Արեւելեան Հիւսիսային կողմը կիյնայ, գրում է պարբերականը, եւ 2500 բնակիչ ունի, որոնց մեծագոյն մասը ձկնորս են»⁷:

Զ. Գարիբալդին երբ սկսում է իր «Հազարյակի» արշավանքը, «Փարիզի» խմբագրությունը նույնպես արձագանքում է այդ իրադարձությանը լրագրի էջերում անդրադառնալով «Իննևտասներորդ գարու դիւցազնին»⁸: «Յիշեալ նշանավոր զօրապետին ձէնովայէն մեկնելէն ի վեր խմբագրութեան գլխաւոր նիւթն եղեւ նորա ճամբայ ելնելու, հետը դացող կամավոր զօրաց, Իտալիոյ զանազան կողմերը և մանաւանդ Անգղիոյ մէջ բացուած ստորագրութեանց և կամաւոր զինուորագրութեանց վրա մանրամասն տեղեկութիւններն ու խորհրդածութիւնները: Իսկ ամենէն աւելի ուշադրութիւն գրաւող կէտն այն էր, որ Կարիպալտի ուր ցամաք պիտի ելնէ. Սիկիլիա թէ

⁴ «Փարիզ», 1860, N 31:

⁵ Նույն տեղում, N 12:

⁶ Նույն տեղում, 1861, N 49:

⁷ Նույն տեղում, 1860, N 19:

Գալապրիա. ե՞րբ պիտի հասնի հոն եւ ի՞նչ ընթացք պիտի բռնէ», - տարակուսում է պարբերականի խմբագիրը:

Հիմք ընդունելով հեռագրական լուրերը, շարունակելով գրել իտալացի հերոսի մասին՝ պարբերականը հիշատակում է. «Ամսոյս 12-էն 13 լուսնալոյ գիշերը Գարիպալտի յաջողեր է Սիկիլիոյ Մարսալա քաղաքը 1000 զորք հանել»⁸: Թեեւ հակառակորդ ուժերը կրակել են Գարիբալդիի երկու նավերի վրա, իտալացի հերոսը, սակայն, դիմագրավել է նրանց հարվածներին և անվնաս ափ իջել:

Լրագրում հրատարակվում է Գարիբալդիի նամակը, որում բացահայտվում է Սիցիլիայի ապստամբներին օգնելու առիթը. «Ես չէի Սիկիլիոյ մեջ ապստամբելոյ խորհուրդ տուողը, բայց երբ որ մեր սիկիլիացի եղբայրներն սկսան, ես ինձի պարտք համարեցի իրենց օգնել»⁹: Նամակի ավարտին սիցիլիացիներին կոչ է արվում զենքի դիմել՝ պաշտպանելու հայրենիքը. «Սիկիլիան պիտի ցուցանէ անգամ մըն ալ աշխարհի, թէ ինչպէս երկիր մը կրնայ զերծանիլ հաստատողներին ձեռքէն միացեալ ժողովուրդի մը հաստատուն կամօքը»¹⁰: Սիցիլիայի ապստամբներին ուղղված կոչը ավարտվում է հետևյալ խոսքերով. «...ի զե՛ն, - ամենքդ մըն ալ աշխարհի, թէ ինչպես երկիր մը կրնայ զերծանիլ հարստահարողներու ձեռքէն միացեալ ժողովուրդի մը հաստատուն կամքը - Գարիպալտի»: Այս դեպքում «Փարիզի» խմբագիր Ա. Մուրադյանը, տպագրելով այս նյութը, նկատի ունի XIX դ. կեսի Հայաստանի դժնդակ վիճակը: Աշխատում էր Հայ երիտասարդներին սիցիլիացիների փառահեղ օրինակով կոչ անել զենքի դիմելու և կռվելու, նրանց սրտերը բորբոքելու հայրենիքի ազատագրութեան գաղափարով:

Հոգևորականները նույնպես մասնակից են եղել իտալացի հերոսի սիցիլիական արշավանքին՝ առաջնորդելով ապստամբներին՝ «մէկ ձեռքերին խաչ և միւս ձեռքերին թուր բռնած»¹¹: «Փարիզը», կողմնակից լինելով իտալական հարցի խաղաղ լուծմանը, նշում էր. «Նապոլիէն եկած բոլոր լուրերը հաստատում են, թե Մեսինայի ու Փալերմոյի հանդարտութիւնը շարունակվում է»¹²: Թուրինի ու Միլանի սիցիլիացիները նույնպես մեծ համակրանքով են վերաբերվել Սիցիլիայի ապստամբներին:

«Փարիզը» դրո՞ւմ է նաև, որ (1861 թ. սեպտեմբերի 7-ին - Հ. Ա.) Նեապոլի և երկու Սիցիլիաների բնակիչները մեծ հանդես են կատարել նվիրված «...իրենց ազատութեանը»¹³: Որտեղ մեկ տարի առաջ «իտալական անկախութեան դիւցազնը»՝ Զուզեպպե Գարիբալդին, առանց արյունահեղութեան մտնում է այդ քաղաքը՝ նշելով հիշարժան օրը: Եվ այս առիթով թրէքքի կոմսը, որը իտալական ազատագրական շարժման ժամանակ Գարիբալդիի օգնականն էր, Վիկտոր-Էմանուելի հանձնարարութեամբ ճանապարհվել է Գարիբալ-

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, 1860, N 16:

¹² Նույն տեղում, 1861, N 54:

¹³ Նույն տեղում:

դիր մոտ՝ նրան Կապրերայից հրավիրելու, որպեսզի մասնակցի Նեապոլի տոնախմբությանը: Իսկ հերոսն ընդունել է թագավորի հրավերը և խոստացել ժամանել Նեապոլ սեպտեմբերի 7-ին իր հաղթանակի տարեդարձի օրը:

«Փարիզը» գրում է նաև այն մասին, որ Գարիբալդիի՝ Նեապոլ այցելելուց հետո բնակիչները «ամսոյս 7-ին (1861 թ. սեպտեմբերին - Ա. Հ.) մեծահանդէս տօնեցին իրենց ազատութեան և Պոլրպոնեանց ատելի լծոյն անկման տարեդարձը»¹⁴: Լրագիրը հայտնում է նաև, որ հատկապես Նեապոլում այդ դեպքին նվիրված տոնախմբությունը շքեղորեն է նշվել, երեկոյան քաղաքը լուսավորության մեջ էր, ամենուր ուրախություն էր, այդ ժամերին երթեր էին տեղի ունենում. մարդիկ աղաղակում էին՝ «Կեցցէ՛ արքայն, կեցցէ՛ Կարիպալտի»¹⁵:

«Փարիզը» նաև թարգմանական հոդվածներ էր տպագրում: Օրինակ՝ «Գարիբալդիի գլանիկը» (1862, N 73) ակնարկը վերապրված էր «Գուռիէ տը դուէմօն» ֆրանսիական լրագրից: Այն պատմում է իտալացի հերոսի ժողովրդականության մասին: Իտալացի մյուս դեպքերի Զուգեպպե Մաձձինիի մասին գրելիս պարբերականը շատ դուսպ է, թեև այդ դեպքում ևս երևում է լրագրի դրական վերաբերմունքը իտալական ազատագրական շարժման նշանավոր անհատի նկատմամբ:

«Փարիզը» տպագրում է Մաձձինիի՝ ճառը՝ ուղղված սիցիլիացիներին: Նա ևս Գարիբալդիի նմանությունը կոչ է անում սիցիլիացիներին. «Պատերազմեցէ՛ք դիւցազնաբար», հիշեցնում, որ հայրենիքի միասնության համար ինքը հրաժարվել է հանրապետական գաղափարներից և քարոզում է, որ Բուրբոնների իշխանությունը տապալելուց հետո հռչակեն Վիկտոր-Էմանուելի թագավորությունը: Իտալացի հերոսի ճառն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Արցիլիացիք, ժամանակն եկաւ: Յանուն Իտալիոյ, ի գէն փութացէ՛ք»¹⁶: Պարբերականն այս դեպքում ևս ընդգծում է նրա դիրքորոշումը. կանգ չառնել ոչնչի առջև, անգամ հրաժարվել հանրապետական գաղափարներից և բոլոր ուժերն ուղղել միայն այդ սուրբ գործի հաղթանակի համար:

Պարբերականի ինքնուրույն նյութերից է Կավուրին նվիրված հոդվածաշարը: Նրա մասին տպագրել է ժամանակի հասարակական գործիչ, պոետ Խաչատուր Միսաքյանը («Տը Բավուռ կոմսի մահը») երեք հոդվածներում: Ինչ-որ տեղ Կավուրի գաղափարները համահունչ էին պարբերականում տպագրված հոդվածաշարին: Ըստ նրա՝ ազատություն տենչացող բոլոր ազգերին ծանոթ է Կավուրի անունը, և այդ հարցում բոլորը պետք է ընդօրինակեն նրան, ներառյալ՝ Հայերը: Պարբերականը արժևորում է նրա կատարած գործը իտալիայի միավորման համար:

Խ. Միսաքյանը (1845-1891) Ա հոդվածում՝ «Նշանք ժամանակի» խորագրով, գրում է այն մասին, որ մարդիկ իրարից տարբերվում են

¹⁴ Նույն տեղում, 1861, N 54:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, 1860, N 18:

լեզվով և կրոնով: Բայց դա չի խանգարում, որ բոլորը միավորվեն մի գաղափարի շուրջ: Հեղինակն անդրադառնում է «Հայոց ազգին վերածնության ու բարգավաճությանը տենչացող» այն անհատներին, որոնց ծանոթ է այս «Իտալացւոյն գերապանծ անունը»¹⁷: Բանաստեղծը գրում է կոմսի մասին, որը գերազանցեց իր նախորդներին և կատարեց «քաղաքական փրկչի» անուրանալի դերը ողջ Իտալիայի ու Եվրոպայի համար: Խ. Մխաբյանը Կավուրին համարում է «Իտալիոյ նախասահմանեալ և վերջին ազատարարը», որը 26 միլիոն իտալացիներին Սարդինիայի ազգաժողովին մեջ ազատութեան և միութեան գաղափարը հաղորդեց, իր հայրենիքի դեմ հանդես եկող բռնակալներին «շանթահարեց», համագործակցեց գաղափարական գնդերի հետ, որի շնորհիվ Վիկտոր-Էմանուելը Երկրորդի թագին անցան Ադրիական ծովի գոհարները Լոմբարդիան, Նեապոլը, Սիցիլիան, Պարմայի և Մոդենայի դքսութիւնները:

Իտալացի ազգը կոմսի գործերի շնորհիվ փյունիկի նման վերածնվեց: Պոետը գուգահեռ է անցկացնում Հայոց ճակատագրի և կոմսի անցած ուղու վերաբերյալ:

Հեղինակը հիշում է Կավուրի գործունեության վաղ շրջանը, երբ կոմսը 1847 թ. հրատարակեց «Ռիսորճիմենթո» անունը կրող օրագիրը, որտեղ առաջադրվեց Իտալիայի միավորման հարցը: Ապրելով Լոնդոնում և Փարիզում՝ կոմսը ծանոթացավ եվրոպական քաղաքակրթությանը: Հայտնվելով Վիկտոր-Էմանուելի ստվերի տակ՝ նա իր ձեռքը վերցրեց անկախ պետականությունն ստեղծելու հարցը: Պիեմոնտը, մասնակցելով Սևաստոպոլի մարտերին, նիզակակցութեան մեջ մտավ Անգլիայի և Ֆրանսիայի հետ, որից օգուտ չքաղեց, բայց ցուց տվեց Իտալիայի իսկական դեմքը՝ համախմբվելու կարողությունը դժվարին պահերին. Սուֆերինոյի ճակատամարտից հետո Կավուրը միացյալ Իտալիայի հարցը առաջ քաշեց, որից և սկսվեց երկրի միավորման գործընթացը:

Խ. Մխաբյանի երկրորդ (Բ) հոդվածը ևս սկսվում է Կավուրի մասին հիացական խոսքերով:

Շատերը պայքարեցին Իտալիայի «ինքնիշխանութեան ու միութեան» համար, բայց Կավուրը տարբերվում էր բոլորից նրանով, որ ազգի համաձայնությունն էր ստանում և «կառավարութեան ականածութիւնը»¹⁸:

Խ. Մխաբյանի կարծիքով Իտալիան, որը Եվրոպայի դրախտն է, պատմության ընթացքում երևելի մարդիկ չատ է տվել Դանթե, Միքելանջելո և ուրիշներ: Սակայն Գալիլեյը և Կավուրը «երկիրը ցընցեցին», և նրանց պես մարդիկ «երկրագունտիս վրայ միշտ հազուադիւտ եղած են»: Իտալական այս լուսավորյալ անհատները «Իտալիոյ քաղաքական արեգակնային դրութեան արբանյակներն էին»¹⁹: Կավուրը առանձնանում էր մյուս մեծ մտածողներից նաև նրանով, որ միայն այս գործչին էր վիճակված կառավարության ականածությունը ու զորությունը ստանալու: Խ. Մխաբյանը գտնում է նաև, որ

¹⁷ Նույն տեղում, 1861, N 48:

¹⁸ Նույն տեղում, 1861, N 49:

¹⁹ Նույն տեղում:

Կալուրը գործերի մեջ հաջողակ «անօրինակ հանճար» էր, և նրան նվիրված ներբողները «գլուցադրանց ճակատները պատող ճաճանչներու նշոյլներէն չեն»²⁰:

1859 թ. Վիլաֆրանկյան հաշտությունից հետո Կալուրը վարչապետի պաշտոնից հրաժարական տվեց: Սակայն նրա ուշադրության կենտրոնում էին Վենետիկի նահանգը և Հռոմը, որոնց բնակչության թիվը 10 միլիոն մարդ էր: Արանք ևս հեծում էին Բուրբոնների «անգթութիւնից», հարկերը շատ էին, և Կալուրը ձգտում էր բոլորին համախմբել Վիկտոր-Էմմանուելի դրոշի ներքո: Կալուրի աշխատանքի շնորհիվ:

Խ. Միսաքյանի գրվածքները դիպուկ է բնորոշել իր ժամանակակիցը՝ Հակոբ Պարոնյանը. «Խոսքերու վարսավիրա մ'է, որ ասդինն անդինն խոսքեր հավաքելով՝ զանոնք կսանտուք, կկոկե, անուշաբույր յուղերով կօծե և հրապարակ կհանե, և երկու տողով հասկանալի բան մը յուր գրչին տակ երկու էջի մեջ անհասկանալի կըլլա»²¹: Կալուրի գաղափարները և վարած քաղաքականությունը իտալիայում ժամանակին քննադատել է Միքայել Նալբանդյանը: Հավանաբար վերջինս այս հարցում հետևել է ռուս հեղափոխական դեմոկրատներ Մ. Չերնիշևսկու և Ն. Գոբբոլյուբովի հայացքներին: «Ազգի ազատագրման հեռանկարները նա չէր կապելու Բոնապարտի կամ Քալուրի, գրում է ակադ. Աշոտ Հովհաննիսյանը, այլ Մաժձինիի և Գարիբալդիի, Գերցենի և ռուս ռեվոլյուցիոն այլ գործիչների գլխավորած շարժումների հետ»²²: «Փարիզը» բացահայտում է իր դրական վերաբերմունքը Վիկտոր-Էմմանուելի իտալիայի թագավոր ընտրվելու կապակցությամբ: Անգամ Ֆրանսիայի կայսրը՝ Նապոլեոն Երրորդը, ճանաչել է Վիկտոր-Էմմանուելին որպես իտալիայի թագավոր միայն մի պայմանով, որ Ֆրանսիական զինվորը մնան իտալիայում, մինչև որ այնտեղ կապահովվի որոշակի քաղաքական կայունություն²³: Եվ որպեսզի ցույց տրվի Վիկտոր-Էմմանուելին էլ անհանգստացած է Հռոմի ազատագրման հարցով, թագավորը, Թուրինի «Իթալի» լրագրի հաղորդմանը նայելով, գրում է, որ Թուրինի բնակիչները խնդրում են թագավորին իրենց էլ իր պաշտպանության տակ առնեն: Իսկ թագավորը նրանց պատասխանել է. «Կըյուսամ, որ ձեր բաղձանքը քիչ ժամանակէն պիտի կատարի: Իմ նպատակս եղած է, ասում է թագավորը, միշտ իտալիոյ ժողովուրդը մէկ ընել, և ասոր համար Հռոմը մեզ պետք է»²⁴:

«Փարիզը» ոգևորված է նաև այն փաստով, որ երբ Վիկտոր-Էմմանուելը հռչակվեց իտալիայի թագավոր, մեծ տոնախմբություններ տեղի ունեցան Թուրքիայի Զմյուռնիա քաղաքում և այլուր: Զմյուռնիայի օտարազգի բոլոր հյուպատոսները այցելել են իտալիայի Լուիջի Բինա հյուպատոսին և շնորհավորել այդ մեծ դեպքի

²⁰ Նույն տեղում:

²¹ Պարոնյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1932, հ. 3, էջ 123:

²² Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, Ե., 1955, գիրք առաջին, էջ 320:

²³ «Փարիզ», 1861, N 49:

²⁴ Նույն տեղում:

կապակցութեամբ: Այդ նույն օրը՝ 1861 թ. ապրիլի 16-ին, նրանց հետ են եղել Զմյուռնիայի Հայ ազնվական երիտասարդները, «քանի մը երեւելի արժանայարգ անձանց ընկերութեամբը» այցելելով Հյուսպատոսին, իսկ վերջինս սիրով ընդունել է նրանց: Շնորհավորելով Հյուսպատոսին Հայկազուն երիտասարդները բարեմաղթել են «Օգոստոսափառ թագավորին» և իրենց խոսքն ավարտել «Կեցցէ՛ ազատ եւ միավորեայն Իտալիա», «Կեցցէ՛ Վիքտոր Էմմանուէլ երկրորդ» խոսքերով: Իր հերթին էլ Իտալիայի Հյուսպատոսը պատվով է ընդունել նրանց ու իր սրտի խոսքն ասել՝ «Կեցցէ՛ Հայոց ազգը», «գոհունակութիւնը յայտնել» Հայ երիտասարդներին: Ի դեպ, նշենք, որ «Փարիզ» լրագրում տպագրված այս նյութը տեղ է գտել նաև Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» լրագրում (1861, N 479):

«Փարիզ» թերթը հանգամանորեն անդրադարձել է իտալական ազգային-ազատագրական շարժումներին, գովեստի խոսքեր ուղղել նրա ղեկավարների հասցեին, իհարկե, նկատի ունենալով նաև Հայ ազատագրական շարժումները, որի ժամանակ հնարավոր է նրանց ուսանելի դասերը օգտագործել:

ОТГОЛОСКИ ИТАЛЬЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ "ПАРИЖ"

АСМАРЯН Г. А.

Резюме

Абраам Мурадян — редактор газеты "Париж" — был представителем либерального течения. Газета издавалась с 1860 по 1863 гг., в период итальянского освободительного движения, развернувшегося в 1859-1860-ые гг. На страницах газеты издавались как арменоведческие материалы, так и материалы об итальянском освободительном движении и его ключевых фигурах — Дж. Гарибальди, Дж. Маццини и т. д., которые редакция газеты черпала из французской периодики, поскольку А. Мурадян избегал цензуры.

²⁵ Նույն տեղում, 1861, N 45: